

## ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆ ԻՐԻՆՎ ՔԱՆԱՎՈՐ

ԱՐԶԱԿԻ ՏԵՍԱԿ

/բստ 1930-1935 թթ. Գեղարքունիքում գրառված  
բանահյուսական նյութերի/

1. Անանի ավագանի բանահյուսական հարուստ ավանդություն մեջ լացառիկ նշանակություն ու արժեք ունի արտահերթաթային պատմողական արձակյք /անահավատական զրույցներ, պատմական ավանդություններ, հուշապատումներ, հղելություններ/: Բանահյուսական ստեղծագործությունների հետ ունեցած աղերսով և պատմա-մշակութային արժեքով առանձնակի հետաքրքրության են արժանի հուշապատումները, որոնք բախտիոր արձակի տակալին շուսումնասիրված տեսակներինց են: Դրանք գեղարվեստական որոշակի ձևինց զուրկ, ոչ քողարձակ անպճուլմ պատմություններ են, համախ ասացող ակառատեսի հետ պատահած իրողություններ, ներծծված հուշք պատմողի հարաիոփոխ տրամադրությամբ: Հուշապատումները ժամանակագրորեն բնդրկում են հուշք պատմողի և իր սերնդակինցների կյանքի որոշակի փուլերը, շին պտտվում ու նկնդիրների մեծ լսարաններում և համախ հուշք պատմող ակառատեսի սեփակաևությունն են հանդիսանում:

2. Թեմատիկ քնդրկմամբ /պատմական եղելություններ, դեմքեր/ առնչակցվելով պատմական ավանդություններին, հուշապատումները դրանցինց զգալապես տարբերվում են դեռևս վերջնակաևապես շճավորված ժանրային կառուցվածքով և ակառատեսի անհատական և ոչ լիարժեք բանահյուսական երանգավորմամբ: Այսուամեևայնիլ, հուշապատումները պետք է դիտվեն իբրև պատմական ավանդությունների նախատիպեր, որոնք հետագայում, պատմության երկարամև հուլովությունին քնթացքում կարող են վերածել ավանդության: Իբրև ակառատեսի հավաստի վկայություններ, ազգային-հասարակական, քաղաքական իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի ճշմարտացի անդրադարձումներ, հուշապատումները յուրովի համալրում են ժողովրդի պատմության հայտնի փուլերը և որոշակի աշխուժություն հալորում դրանց:

3. Հուշապատումների բանագիտական արժեքն տոաջին հերթին այն փոխադարձ կապի մեջ է, որ ունեն դրանք բանահյուսական այլ ժանրերի ստեղծագործությունների հետ:

4. Հուշապատումներն անդրադարձնելով ժողովրդի կյանքում կատարված պատմական կարևոր և նշանակալից իրողությունները՝ համախըրացնում, մշտնապես, գնահատում են նրա պատմության շատ դրվագներ ու պատմական անձանց դիմագծեր, որոնք պաշտոնական պատմագրության մեջ քաղաքական տարրեր նկատառումներով համախըրացնել են առնվում կամ աղավաղվում: Այս իմաստով էլ հուշապատումները համախըրացնում են պատմական սկզբնաղբյուրի արժեք և իբրև ականատեսի մշտնապատում փաստացի վկայություն, խիստ օգտակար են պատմական անձանց և իրադարձությունների գիտական մշտնապես գնահատման համար:

5. Հուշապատումները լինելով կոնկրետ պատմական եղելությունների ականատեսի վկայություններ՝ ունեն տեղային բնույթ, ուստի և, բնականաբար, այլ ժողովուրդների բնավոր ավանդության մեջ գուցահեռներ չունեն:

Գեղարքունիքում մեր գրած հուշապատումների հիմնական թեման նախահեղափոխական Հայաստանում ժողովրդի թշնամիների կողմից հրահրված ազգամիջյան քննհարումներն են:

Ա.Մ.ԳՈՒԼՅԱՆ

ԱԶԹ

ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԻ ԷԹՆԻԿ ԻՆԲՆԱԳԻՏԱՆՑՈՒԹՅԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ

/տեսական բնութագրման փորձ/

1. Ենթադրվում է, որ ազգն առանց ինքնագիտակցության չի կարող գոյություն ունենալ: Առավել ևս չի կարող գոյություն ունենալ սփյուռքը: Այն, որ պատմական անցյալի, ազգային մակատարի և շահերի գիտակցումը, էթնիկ բնավորության պատկերացումները և այդ ամենի գնահատականը ներկայանում են որպես ազգային ինքնագիտակցության փաստեր\*, պարզորոշ ցույց է տալիս ինքնագիտակցության կենսական նշանակությունը մասնավորապես սփյուռքի համար: Էթնիկ ինքնագիտակցությունը սփյուռքում ցայտուն է արտահայտված, քանի որ հանուն ազգային գոյության պայքարն առօրյա է: Այդ հանգամանքը հարավորություն է բնձնողում էթնիկ ինքնագիտակցության բովանդակության ու կառուցվածքի հետ կապ-

\* Թվարկումը հավակնություն չունի ներկայացնելու էթնիկ ինքնագիտակցության կառուցվածքն ամբողջությամբ: